№ 202 Նոյեմբերի 14 (26) 1880 Նոյեմբերի 14 (26) № 202

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ադրէսի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ զանազանութիւն.—Ներքին տեսութիւն: Նամակ Մոսկվայից: Նամակ խմբագրին: Նամակ Օդէսայից: Նամակ Երեւանից: Նամակ Շուշուց: Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն: Բրդական ապստամբութիւն: Թիւրքիա: Գերմանիա: Պարսկաստան: Նամակ Պարսկաստանից: —«Մշակի» հեռագիրներ.— Յայտարարութիւններ:

ԻՆՉ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

I

Հայերը խառնում են հիմնական գաղափարներ եկեղեցու մասին: Ազգային եկեղեցի բառով նրանք հասկանում են տիրապետող եկեղեցի: Ճշմարիտ է լուսաւորչական եկեղեցին ազգային եկեղեցի է, որովհետեւ նա հետեւանք է ազգային պատմական կեանքի, նրա արարողութիւններն ու ծէսերը կատարվում են թէեւ հին, մեռած, բայց ազգային համարվող լեզուով. բայց մանաւանդ նա ունի իր ազգային կազմակերպութիւնը, իր կրօնապետական կազմակերպութիւնը, իր երարխիան, իր ներքին՝ ինքնավարութիւնը, ձեռք է բերել ազգային կալուածներն ու դրամները, պահում է ազգային դպրոցներ:

Բայց նոյն ազգային անուան արժանի կը լինէին և բողոքական ու կաթօլիկ հայոց եկեղեցիները, եթէ նրանք էլ ունենային ներքին եկեղեցական ինքնավարութիւն, նրանց մօտ էլ արարողութիւնները, ծէսերը, քարոզութիւնները կատարվէին ազգային, մայրենի լեզուով, նրանք էլ իրաւունք ունենային ձեռք բերել ազգային կալուածներ և ազգային դրամներ, իրաւունք ունենային սեփական ներքին վարչութիւն ունենալ, իրաւունք ունենային պահել ազգային դպրոցներ մայրենի լեզուով:

Ինչպէս լուսաւորչական եկեղեցին ազգային-լուսաւորչական եկեղեցի է, այնպէս էլ հայ-կաթօլիկ եկեղեցին կարող էր լինել ազգային կաթօլիկ եկեղեցի, հայ բողոքական եկեղեցին կարող էր ազգային-բողոքական եկեղեցի լինել:

Ի հարկէ, եթէ կաթօլիկ հայոց եկեղեցին աքսորէր իր միջից հայոց լեզուով արարողութիւնները և իր բոլոր ծէսերն ու արարողութիւնները կատարէր լատինական լեզուով, եթէ նա իրաւունք չունենար իր եկեղեցական ինքնավարութիւնն ունենալ, իրաւունք չունենար իր հայ եպիսկոպոսն ունենալ, այլ միշտ կախված լինէր անմիջապէս Սարատովի եպիսկոպոսից, եթէ իրաւունք չունենար իր եկեղեցական դպրոցներ պահել, որոնց մէջ ուսմունքները աւանդվէին մայրենի լեզուով, նա չէր լինի ազգային եկեղեցի: Եթէ հայ-աւետարանական եկեղեցին ստիպված լինէր իր բոլոր քարոզութիւններն անել գերմաներէն լեզուով, աւետարանը կարդալ տալ օտար լեզուով, իրաւունք չունենար իր եկեղեցական ազգային կօնսիստորն ու եկեղեցական վարչութիւնն ունենալ, իրաւունք չէր ունենայ հայոց լեզուով դպրոցներ պահել իր ծուխի զաւակների համար, իրաւունք չէր ունենայ հայախօս պաստոր ու հայախօս ուսուցիչ պահելու, նա չէր լինի ազգային եկեղեցի:

Ուրեմն ազգային բառը չէ վերաբերվում միմիայն գրիգորեան եկեղեցուն, բայց ազգային կարող է լինել ամեն եկեղեցի, որ իր ամբողջ գոյութեամբ հիմնվում է ազգային սկզբունքների վրա, անխզելի կապերով կապված է հայ ազգի հետ:

Այդ կողմից և լուսաւորչական եկեղեցին մասամբ հեռացել է ազգային լինելուց, որովհետեւ նրա արարողութիւնները, ծէսերը կատարվում են և նրա աւետարանը տպագրվում է ոչ թէ կենդանի, ժողովրդին հասկանալի, մայրենի, ազգային լեզուով, այլ մեռած, կլասիկային, անգործածելի, ամենքին անհասկանալի լեզուով:

Մահմետականութիւնը ծնվել է Արաբիայում, ղուրանը գրվեցաւ արաբերէն լեզուով, բայց ասիական այլ և այլ ազգերը, թիւրքերը, պարսիկները ընդունելով մահմետականութիւնը դարձրին այդ կրօնը իրանց համար ազգային կրօն, որովհետեւ թիւրքը թիւրքերէն է քարոզում և բացատրում ղուրանը, պարսիկը՝ պարսկերէն, նրանք ունեն իրանց երկրում իրանց սեփական ազգային եկեղեցական կազմակերպութիւն, թէեւ մահմետականութեան գլխաւոր հոգեւոր գլուխը դարձեալ նստած է այդ երկիրներից դուրս, Արաբիայում, Մէկկայում:

Նոյնը պատահել է և քրիստոնէութեան հետ: Քրիստոնէութիւնը ծնվել է Հրէաստանում, բայց իտալացին, ֆրանսիացին, գերմանացին կամ շվէդացին ընդունելով այդ կրօնը, ամեն մինը այդ ազգութիւններից դարձրին այդ եկեղեցին իրանց ազգային եկեղեցի: Կաթօլիկ գերմանացին ունի իր ազգային կաթօլիկ եկեղեցի, բողոքական գերմանացին ունի իր ազգային բողոքական եկեղեցի:

Ամեն եկեղեցի որ ընդունվում է մի ազգութենից կամ այդ ազգութեան մի մասից, կարող է դառնալ ազգային եկեղեցի, եթէ ազգը սեփականացնում, իւրացնում է այդ եկեղեցին, դարձնում է նրան ազգային լեզուի, տալիս է նրան ինքնուրոյն ձեւ և գոյն, մտցնում է նրա մէջ այս կամ այն ինքնուրոյն վարչական ներքին եկեղեցական ինքնավարութիւն:

Հայերի մէջ, ինչպէս ամեն ազգի մէջ կարող են միաժամանակ և լուսաւորչական և կաթօլիկ և աւետարանական եկեղեցիները ազգային եկեղեցիներ լինել: Մինչև անգամ ընդհանուր ազգային մի քանի հարցերի վերաբերութեամբ այդ երեք եկեղեցիները կարող են միանալ, միասին պաշտպանել ազգի ընդհանուր շահերը: Ազգային եկեղեցու և տիրապետող կամ պետական եկեղեցու գաղափարները երբէք չը պէտք է խառնել իրար հետ:

Տիրապետող կամ պետական եկեղեցի բառը մենք կը բացատրենք միւս անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Նոյեմբերի 3-ին

Ինչպէս յայտնի է՝ 1881 թ. ամառը՝ լինելու է Թիֆլիսում հնագիտական ժողովի. Դեռ անցեալ տարի այս նպատակով մի քանի նախապատրաստական նիստ եղաւ Թիֆլիսում՝ կոմս Ուվարովի նախագահութեամբ, ուր ընդունվեցաւ մի որոշ ծրագիր և բաժանվեցան մի քանի նիւթեր յառաջիկայ ժողովի համար: Լսում ենք, որ Մոսկվայի հնագիտական ժողովը, որ մեծ դեր է խաղում Թիֆլիսում լինելիք հնագիտական ժողովի համար, յանձնել է մեր գիտնական հայրենակից պ. Մ. Էմինին ներկայացնել միւս տարի բոլոր հայոց արձանագրութիւնները (Ռուսաց սահմաններում գտնված աւերակներից և յիշատակարաններից) հին ժամանակներից սկսեալ մինչև XIII դարը. արդէն այդ աշխատութիւնը պատրաստ է և շուտով կը յանձնվի ժամանակին: Նոյնպէս լսում ենք, որ բացի արձանագրութիւններից, մեր գիտնական հայրենակիցը պատրաստում է եկող տարվայ մէջ լոյս ընծայել մի քանի շատ հետաքրքրական աշխատութիւններ, որոնք կարող են մեծ լոյս ձգել հայոց դիցաբանութեան, պատմութեան և հին վէպերի կամ ժողովրդական երգերի վրայ: Այդ երկասիրութիւններն են. Ա. Նոր թարգմանութիւն Խորենացու Հայոց պատմութեան (առաջին գիրքը և երկրորդ գրքից 9 գլուխ—Մար-Աբասին վերաբերեալ մասն) նորանոր ծանօթութիւններով և տեղեկութիւններով. Բ. Հին Հայոց դիցաբանութիւնը՝ նորից մշակված և լրացրած, Գ. Հին Հայաստանի վէպերը՝ նոյնպէս նորից մշակած և զանազան քննութիւններով և ծանօթութիւններով հարստացրած: Բոլոր աշխատութիւնները լինելու են ռուսաց լեզուով:

Մոսկվայում պատրաստվում է և շուտով հրատարակվելու է մի շատ հարցասիրական աշխատութիւն—Զէյթունի յատակագիծը (планъ) մանրամասն ծանօթութիւններով քաղաքների, գեղերի, լեռների (նոցա բարձրութեան) գետերի, հանքերի, վանքերի, անտառների և այգեստանների մասին: Յատակագիծը ունի 1 արշինաչափ երկայնութիւն և $^{3}/_{4}$ արշ. լայնութիւն. նրա իւրաքանչիւր դիւյմը համապատասխան է Զէյթունի 3 վերստին—այս է նրա մաշտաբը: Յատկագծի յօրինողը երիտասարդ հայ զինուորականներից մէկն է—Արտաշէս Սուրէնեանց, որ՝ Զէյթունի յատակագծից յետոյ՝ մտադիր է սկսել Մեծ Հայոց յատակագիծը, մէջ առնելով Էրզրումի, Մուշի, Դիարբէքրի, Վանի և Ալաշկերտի սահմանները:—Ամենայն սրտով համակրում ենք երիտասարդ օֆիցերի աշխատութիւններին և անհամբերութեամբ սպասում ենք նրանց լոյս տեսնելուն:

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօսկվա, 1-ին նոյեմբերի

,,Պսակ'' լրագիրը իր № 30-ի բանասիրականի մէջ դարձեալ զուարճացնում է իր ընթերցողներին և մանաւանդ ինձ իր սովորական հայհոյանքներով: Կիրք, բարկութիւն, ատելութիւն հնչում է ամեն մի բառից: Թուլութեան կատաղութիւնը միշտ այդ կերպով է արտայայտվում: Պ. Թ. Ջ-ն զինուորվում է ինձ դէմ այն նահապետական զէնքով, որով շատ հարուստ է ,,Պսակի'' խմբագրութիւնը—հայհոյանքների բառարանով: Նա երևի միամտութեամբ կարծում է, թէ ես լերդապատառ կը շտապեմ պատասխանելու նրան՝—շատ սխալվում է: Անձնական կեղտոտ կրքերով կուրացածներին, գրականական սուրբ խօսքը ցխոտողներին, ընթերցող հասարակութեան բարոյական զգացմունքը ոտքի տակ առողներին, մայրենի լրագրութեան անունը օտարների առաջ մրոտողներին, լրագրութեան վսեմ նշանակութիւնը ամբոխի աչքում կոտրողներին,—դրանց մի պատասխան միայն կայ՝ խորին արհամարհանք:

Ինչ որ վերաբերում է ,,Պսակի'' վերջինեալ յօդուածում գեղեցկացնող մի քանի ցինիկական յիշոցներին,—դրա մասին ես կը ստանամ բացատրութիւն դատաստանական կերպով: Օրէնքների արդարադատութիւնը միայն կարող է սանձահարել վայրենի ինստինկտներ...

Ա. Գաղեանց

ՆԱՄԱԿ ՕԴԷՍԱՅԻՑ

27 հոկտեմբերի

Վերջին փոփոխութիւններից, որոնք կատարվեցան Ռուսաստանում, ամենանշանաւորը անկասկած այն փոփոխութիւնն է, որ եղաւ ազգային լուսաւորութեան նախարարութեան մէջ: Կոմս Տոլստոյի հեռանալը և պ. Սաբուրովի նշանակվելը ազգային լուսաւորութեան նախարար մի զգալի ցնցում պատճառեց ամբողջ ուսումնարանական աշխարհին: Սկսած համալսարաններից իրանց հարիւրաւոր ուսանողներով մինչև գիմնազիոններն ու ռէալական ուսումնարանները իրանց հազարաւոր սանիկներով ամենքը միահամուռ դարձրել են իրանց աչքերը դէպի հիւսիս, դէպի նորընտիր նախարարը, յուսալով նրանից փրկութիւն իրանց ծանր, սահմանափակ ու կաշկանդված վիճակից։

Ռուսաստանի համարեա բոլոր համալսարանների ուսանողները մի մի աղերսագիր (петиція) ուղարկեցին պ. նախարարին իրանց ռեկտօրների միջնորդութեամբ։ Ընդհանուր միտքը այդ բոլոր աղերսագիրների այն էր, որ պաշտօնապէս թոյլ տրուի ուսանողներին ունենալ իրանց սեփական ժողովները իրանց նիւթին, ուսանողութեան վերաբերեալ պիտոյքները հոգալու համար միանգամայն անկախ կերպով. վերադարձվին այն բոլոր իրաւունքները, որոնցից զրկվել են ուսանողները այժմեան չափազանց խիստ համալսարանական կանոնադրութեան համաձայն։ Թէ ինչ հետեւանք կունենան այդ աղերսագիրները, դեռ ևս յայտնի չէ, միայն պ. նախարարի բռնած ընթացքը և խօսքերը, որ նա արտասանել է այլ և այլ ուսումնարանական շրջաններում իր վերջին ճանապարհորդութեան ժամանակ՝ իրաւունք են տալիս յուսալու, որ հետեւանքը անպատճառ բարի կը լինի։ Լրագիրներից տեղեկանում ենք որ ազգային լուսաւորութեան նախարարութեան մէջ արդէն կազմվել են երկու յանձնաժողով. մէկը՝ գիմնազիօնների վերաբերեալ անհրաժեշտ կարեւոր փոփոխութիւնների համար, իսկ միւսը՝ համալսարանական այժմեան կանոնադրութիւնը քննելու և վերափոխելու համար։ Տայ Աստուած (և այս ամենքիս բաղձանքն է) որ յանձնաժողովները հասնեն իրանց ցանկալի նպատակին և վերջ դնեն այն բազմատեսակ տրտունջներին, որոնք լսվել են և լսվում են բազմաթիւ ծնողների բերանից և բաց անեն ուսանողների առաջն մի լայն ասպարէզ ազատ և ինքնուրոյն կերպով զարգանալու իբրև ազատ քաղաքացիներ։

Առ այժմ կատարված ուրախալի նորութիւններից մէկն այն է, որ Օդէսսայի համալսարանի ուսանողներին, պ. պ. պրոֆէսսօրների խնդրանօք, թոյլ է տուած ունենալ սեպհական ընթերցարան։ Սրա համար կազմված է մի յանձնաժողով նոյն իսկ պրոֆէսսօրներից իրագործելու միջոցների մասին հոգալու։ Մի և նոյն ժամանակ համալսարանական վարչութիւնը մտադիր է, ինչպէս տեղեկանում ենք հաստատ աղբիւրից, բարեխօսել ուր հարկն է վերականգնել 1863 թ. համալսարանական կանոնադրութիւնը։ Իսկ քաղաքային դուման վճռել է խնդրել ժողովրդական լուսաւորութեան պ. նախարարից աւելացնել այժմեան երեք ֆակուլտէտների վրա և չորրորդը, այն է՝ բժշկական ֆակուլտէտը և իրաւունք տալ ռէալական ուսումնարանների աշակերտներին (որոնց թիւը այստեղ շատ շատ է), իրանց դասընթացքը աւարտելուց յետոյ, մտնել համալսարանի ֆիզիկօ-մաթեմատիկական, բնագիտական և բժշկական բաժինները։ Այս մասին առաջ էլ խնդրված է եղել, բայց խնդիրքը մնացել է անկատար։ Համալսարանական վարչութիւնը անձամբ երկու անգամ խնդրվել է նախկին նախարարից թոյլ տալ ռէալական ուսումնարաններում աւարտածներին մտնել համալսարանի վերոյիշեալ բաժինները, եթէ ոչ իբրև ուսանողներ, գոնէ իբրև ազատ ունկնդիրներ, բայց պատասխան է ստացել, թէ նրանք (այսինքն ռէալական ուսումնարաններում աւարտածները) պատրաստ չեն համալսարաններում դասախօսութիւններ լսելու։ Այն ինչ մի և նոյն նախարարի կարգադրութեամբ թոյլ է տուած բօլգարներին, որոնք աւարտել են ռուսաց ռէալական ուսումնարանները, ազատ ունկնդիրներ լինել համալսարաններում և ենթարկվել ամենայն տարի քննութեան հաւասար բուն ուսանողների հետ և վերջումը ստանալ վկայական, որ ունի մի և նոյն զօրութիւնը, ինչ որ ունի դիպլօմը։ Տարիների փորձը բօլգարների վերաբերութեամբ և յայտնի պրոֆէսսօրների (Մէնդէլէեվի, Բէկէտօվի, Մէչնիկօվի և ուրիշների) վկայութիւնները պարզ ցոյց են տալիս, որ ռէալական ուսումնարանների աշակերտների ճանապարհը փակած է բոլորովին անիրաւաբար և 'իզուր չէ, որ ռուսաց մամուլը նրանց անուանում է «խորթ որդիներ»։

Ս. Սաֆրազեանց

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 1

Կրօնը մարդուս ներքին ազատ համոզմունքն է, անբռնաբարելի հաւատքն է, սրտի և հոգու զգացմունքների ներդաշնակաւորութիւնն է երկնային աշխարհի մէջ։ Կրօնը մարդուս երկրից երկինքը բարձրացնող, գերբնական սփոփանքներով մխիթարող, մեր ներքին աշխարհը մաքրող, ազնուացնող, զօրաւոր ամենամուր և ամենահզօր զօրութիւնն է։ Իսկ որովհետև մարդերի սրտերը, բնաւորութիւնները զանազան են, ուրեմն մի և նոյն բանը չէ կարող բոլորի վրա էլ հաւասարապէս ազդող, տիրող դեր կատարել, այն, որ մէկի համար քաղցր է, միւսի համար կարող է դառը լինել, և այլն։ Կրօնը այնքան ազդու, այնքան իշխող, այնքան սուրբ և վեհ կը լինի մի մարդու համար, որքան որ նա ինքնայօժար, ինքնակամ, ինքնաստեղծ, ինքնաբուղխ կը լինի՝ ներքին, իրական, համոզմունքն է միայն, որ կարող է մարդուն իրան ծառայեցնել—հպատակեցնել։ Արտաքինը անզօր է, թոյլ է, տկար է մարդուն ղեկավարելու մէջ.—խօսքս բռնակալութիւնների վրա չէ։

Տեսէք ահա այն մարդուն, ինչպէս անվրդով, ինչպէս խաղաղ, յօժարակամ, սառնասրտութեամբ բարձրանում է կախաղանի, կառափնարանի վրա, տեսէք, ինչպէս նա ցուրտ արհամարհանքով, քաջութեամբ լի սրտով, անվեհեր հոգով բարձրանում է աուտօ-դա-ֆէի վրա։ Նա բարձրանում է մահ ընդունելու, նա գնում է մեռնելու առանց ահի ու վախի, առանց իր կեանքի համար դողալու, առանց իր կեանքը ափսոսալու։ Այդ ներքին համոզմունքն է, այդ ներքին ձայնն է, ներքին հաւատքն է, որ քաջացնում է նորան, որ մղում է դէպի մահ։ Իսկ այդպիսի մի համոզմունք չէ կարելի ստիպմամբ արմատացնել սրտի մէջ. նա ներքին ձգտումների ինքնակամ համագումարն է։ Այո, սա մի ճշմարտութիւն է, մի ակսիօմա է, որի հակառակը ուզում են ապացուցել մոլեռանդները, հնադաւան ֆանատիկները. սակայն այդ անհնար է, նրանց չի աջողվի։ Մի բան, քանի որ հիմնված չէ առողջ դատողութեան, ճշմարիտ լօգիկայի վրա՝ զուր է պաշտպանել։ Հակառակ դէպքում պաշտպանողները ցոյց կը տան աշխարհին իրանց խելքի և հասկացողութեան չափը, ինչպէս էլ որ ցոյց տուին։ Այո, կրօնը չունի ազգութեան գոյութեան վերաբերութեամբ այն նշանակութիւնը, ինչ որ աշխատում են տալ մոլեռանդները։

Մարդկութեան պատմութիւնը եթէ մի կողմ թողնենք, վեր առնենք հէնց միայն մեր պատմութիւնը, նա էլ մեր առածը կապացուցի։ Հայերը հայ էին աստուածպաշտութեան ժամանակ, հայ էին հեթանոս, կռապաշտ, հայ էին քրիստոնեայ, լուսաւորչական ժամանակ։ Եթէ մեր պատմութիւնը մեզ անուանէր հայ միայն այն ժամանակ, երբ լուսաւորչական էինք, այդ պարագայում առանց ընդդիմախօսելու կը խոնարհվէինք պատմութեան առաջ, բայց որովհետև մեր ազգութիւնը միշտ անփոփոխ է մնացել և նոյն հայը թէ հեթանոս, թէ աստուածպաշտ, թէ քրիստոնեայ, թէ կռապաշտ և թէ լուսաւորչական ժամանակներում, հայը մի և նոյն հայն է եղել, թէ տանուտէրական իշխանութեան, թէ Հայկազանց հարստութեան, թէ օտարներին հպատակութեան, թէ անիշխանութեան և թէ իշխանաւորութեան ժամանակ, թէ հայութիւնը միշտ անփոփոխ է եղել ու մնացել կրօնի փոփոխականութեան շրջաններում, ապա ուրեմն՝ նա, հայը, հայ էլ կը մնայ միշտ, քանի կը ճանաչէ հայութիւն, քանի կիմանայ իր պատմութիւնը, քանի հոգով ու սրտով կապված կը լինի իր հայրենիքի հետ, մանաւանդ՝ քանի կը խօսի հայերէն։ Այս իրողութիւնը մեր այժմեան հրապարակախօսներից շատ լաւ էր հասկացել մեզանից մօտ 4000 տարի առաջ մեր Արամ նահապետը։ Սա չէր հրամայում օտարներին թողնել կրօնը հայութեան մէջ ձուլվելու համար։ Սա բաւական էր համարում միայն հայերէն խօսել։ Բայց դժբախտաբար դեռ մեր օրերում գտնվում են անհատներ, որոնք աշխատում են, չը գիտենք իրանց տգիտութեան թէ անձնական հակակրութեան կամ կապրիզների պատճառաւ, այս թէ պատմական և թէ առողջ դատողութեան ստոյգ արտադրումը ջրել…

Մենք «Մշակի» հետ միասին կրկին ու կրկին կասենք, թող հայը խօսի հայերէն, գիտակցաբար ճանաչի իր ազգութիւնը, կենտրօնանայ իր օրօրոցի մէջ, անձնազոհութեան չափ հաւատարիմ մնայ հայութեանը, իսկ լուսաւորչականութիւնը, թէ միւս ականութիւնը—կրօնը նրա ներքին համոզմունքն է, ոչ ոք իրաւունք չունի ձեռնամուխ լինելու նրա այդ անձնական սեփականութեանը։

Եթէ չը լինի խաւարը, չի գնահատվի լոյսը, այդպէս էլ եթէ չը լինէին «Մեղու», «Պսակ», «Արարատ», չէր գնահատվի «Մշակը»։ «Մշակը» զարթեցրեց կրօնական հարցը և «Մշակն» էլ դրեց այդ հարցը իր պարզ ու ճիշտ շրջանակի մէջ։ «Մշակն» էր, որ հայերիս մէջ առաջին անգամ գոռաց «կրօնը անձնական ազատ համոզմունք է.» և սա մեր պատմութեան մէջ ոսկէ տառերով պիտի գրօշմվին։ Թող խաւարամիտները խաւարը պաշտեն. թող մեռելները իրանց մեռելները թաղեն, մեզ փոյթ չէ։

Վրոյր

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

20 հոկտեմբերի

La fin couronne l'œuvre.—Եթէ մի փոքր հայացք դարձնելու լինենք մեր տեղացիների թէ հասարակական և թէ ազգային գործերի վրա, կը տեսնենք, որ շուշեցիք (սակաւ բացառութեամբ) ոչ մի ժամանակ իրանց սկսած մի որ և իցէ հասարակական գործը կատարելապէս ի գլուխ տարած չեն. դիմենք փաստերի։ Տասնեակ տարիներ անցնում են, որ Ղազանչեցի անուանված հարուստ ժողովուրդը ձեռնամուխ եղաւ հիմք դնել մի ահագին եկեղեցու. ինչպէս ամենայն մի նոր գործ, սկզբում չը խնայեցին իրանց առատ նուէրներով օժանդակել այդ ձեռնարկութեանը մի փառաւոր վախճան տալու համար։ Մսխվեցան 60,000-ներ, եկեղեցու սիւները բարձրացան մինչև կամարները, և երբ եկեղեցին բա մեծի մասամբ շինված էր և մնում էր վրայի կամարները միացնել և ծածկել, այն ժամանակ մեր հասարակութիւնը տեսնելով ահագին ծախքերը, միանգամայն գրեթէ սառեց այդ գործում։ Հանգուցեալ պ. Խանդամիրեանցը իր վրա էր առել այդ շինութեան աւարտելը իր ծախքով, եթէ հասարակութիւնը թոյլ կը տար նրան իր անունը արձանագրել եկեղեցու յիշատակարանի վրա, իբր գլխաւոր հիմնադիր նոյն եկեղեցու։ Ի հարկէ, այդ առաջարկութիւնը չընդունվեցաւ հասարակութեան կողմից. (պ. Խանդամիրեանցի իր մահից առաջ կտակած պ. Բէկլարեանցի մօտ գործվող 12,000 րուբլին «աստուածահաճոյ» գործի համար, նոյն իսկ սոյն եկեղեցու շինութեան առթիւ է, իմ կարծիքով)։ Անցնում են տարիներ, բայց ոչ ոք չէ մտածել և չէ էլ մտածում այդ մասին, և ստորագրվող նուիրատուներից մի քանիսը անյաջող հանգամանքից չը վճարեցին իրանց ստորագրածի մի մասը…

Երկար խօսեցին այստեղ մի ռէալական ուսումնարան ունենալու համար, ասացին, խորհեցին, գրեցին, բայց այս տարի էլ ոչինչ չունեցանք։

Մեր երիտասարդ սիրողները թատրօն հիմնեցին, իբրև մշտական թատրօնական բեմ, նոքա պատրաստեցին բոլոր հարկաւորեալ առարկաները. առաջին ներկայացումից ունեցան մի 30 րուբլու չափ էլ վնաս, յետոյ ամեն բան մնաց ու մնաց անգործադրելի….

Ընթերցարանի համար երկու տարի է, որ խօսում են, գրում են, անդամներ են ժողովում, բայց այդ օգտալին ընթերցարանի հոտն անգամ չը կայ։ Բայց Աստուածեանցները ասում են, որ հալա երկար տարիներ են հարկաւոր, սպասենք, եթէ մենք չը տեսնենք, մեր թոռները հօ կը տեսնեն։

Շուշեցիք բուլվար շինեցին, սկզբներումն փոքր ինչ զուարճացան նրանով, բայց մի քանի շաբթից յետոյ բուֆետը կապել տուին մօտակայում պատահած աւազակութեանց և մարդասպանութեանց առթիւ, որովհետև բուֆետը գիշերներն անգամ բաց էր, և դրա համար գիշերը թուրքերի խումբեր պտտվում էին այդ տեղ. չորս օր չանցաւ, որ բուլվարի միջում շինված բեսեդկայի վարագոյրն էլ գիշերով գողացան տարան… Աստուած դրա հոգին էլ լուսաւորէ….

Մահտեսի Անդրէաս Կեանջեցեանցը բաւական ծախքեր անելուց յետոյ, երկար հեռաւորութիւնից կարողացաւ բաւական քանակութեամբ մի ջուր բերել քաղաքին գրեթէ մօտ, բայց պատահելով անյաջող և միանգամայն ձախորդ դիպուածների, նա անկարող եղաւ իր սկսած գործը ի գլուխ տանել։ Նա սկզբում չը համաձայնվեցաւ, թէև Շուշու հասարակութիւնը իր վրա առեց այդ ջրի քաղաք հասցնելը, որ լինելով բաւական քանակութեամբ, իբր կենսական անհրաժեշտ պիտոյք, մեծ օգուտներ կարող էր տալ քաղաքացիներին։ Անցնում են տարիներ, կրկնում եմ, անցնում են տարիներ, էլ ոչ հասարակութիւնն է մտածում մի կերպով բերել տալ յիշեալ ջուրը և ոչ էլ պ. Անդրէասի ներկայ դրութիւնը թոյլ է տալիս այդ ձեռնարկութիւնը կատարելու. օրէցօր ջրի խողովակները և հարկաւոր տեղերը փչանում են..

Թանգութեան միջոցին հասարակութիւնից հաւաքած փողերից մի գումարով կամենում էին մի մշտական ցորենի պահեստ շինել, բայց երբ թանգութիւնը անցաւ, էլ ոչինչ այդ մասին մտածող չը կայ, բայց թէ այդ մասին կը փոշմանեն թէ ոչ,—այդ ապագան ցոյց կը տայ։

Շատ խնդիրներ կան, որոնց մասին կը խօսվի իր ժամանակին, առ այժմ այսքանով բաւականանալով, կը ցանկայինք, որ Շուշու հայ հասարակութիւնը ուշադրութիւն դարձնէր վերյիշեալ խնդիրների վրա։

Օտարական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԱՇԷՆԻՑ գրում են մեզ, թէ բոլորովին սուտ է այն լուրը, իբր թէ այս գիւղի հասարակութիւնը բողոք չէ մատուցել հոգ. իշխանութեանը տէր-Գալուստ քահանայի անիրաւութիւնների մասին. խնդիրքը մատուցված է տեղային յաջորդին, որը կօնսիստօրիայի միջնորդութեամբ պէտք է ուղարկէր Էջմիածին։ Բայց եթէ Էջմիածինը մինչև այսօր չէ ստացել յիշեալ խնդիրքը, այդ պէտք է վերաբերել կօնսիստօրիայի անկարգութեանը, որը խնդիրքը իր մօտ է պահել և ուշացրել է ուղարկելու։ Նոյն խնդիրքի մէջ յիշված է 170 ստորագրողների բողոքը. եթէ այս անգամ ևս հոգ. իշխանութիւնը ուշադրութիւն չի դարձնի նրանց դատի վրա, ստիպված կը լինեն մի օտար եկեղեցու գիրկն ընկնել։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ երկուշաբթի օր, նոյեմբերի 17-ին լինելու է Թիֆլիսի ռուսաց օպէրայի երգիչ պ. Բատիլի բէնէֆիս։ Կը տրվի «Հրէուհի» Հալէվիի օպէրա։

—

Նոյեմբերի 9-ին, կիրակի օր Թիֆլիսի հարուստները և անուանի մարդիկ հայ հասարակութենից հաւաքվեցան առաջնորդարանում, որպէսզի պատասխան տան Կ. Պօլսի Ներսէս պատրիարքի գրութեանը, որ խնդրում էր փող ժողովել Թիֆլիսում և օգնել Թիւրքաց Հայաստանի սովատանջներին։ Մի քանի ժամվայ մէջ գումարվեցաւ ինն հազար րուբլ, որ և կուղարկվի պատրիարքին, կամ սովելոց մասնաժողովին։ Նոյն տեղ խնդիր զարթեցաւ որ շատ լաւ կը լինէր ունենալ Թիֆլիսում մի մշտական ընկերութիւն, Բագուի Մարդասիրական ընկերութեան պէս, փոխանակ միշտ արտակարգ նիստեր կազմել որ և է հանգամանքութեան առթիւ։

—

Թիֆլիսի Վանքի մայր-եկեղեցու աւագ քահանայ ծերունի տէր-Յովհաննէս Սարգսեան, որ յարգված է ամբողջ Թիֆլիսի հայ հասարակութենից, մի ինչ որ Մամբրէ վարդապետի կարգադրութեամբ կարգալոյծ է եղած մի իբր թէ չըհաս պսակի կատարելու համար։ Ասում են որ այդ պսակը մի առիթ է միայն, իսկ բուն պատճառը նախ՝ Մամբրէի ատելութիւնն է դէպի ծերունի քահանան, իսկ երկրորդը՝ առևտրական նպատակն է։ Բանը դրանումն է որ տէր-Յովհաննէս աւագ քահանան բաւական հարուստ մարդ է և Մամբրէն շատ լաւ գիտէ որ մեծ շահ չը կայ կարգալոյծ անելու մի որ և է աղքատ քահանայ, իսկ հարուստին կարգալոյծ անելը շահաւէտ է, որովհետև քանի մի շաբաթից յետոյ կարելի է նրան ակնարկել տալ. «մի բան տուր, և դարձեալ քահանայութեան իրաւունքը քեզ կը վերադարձնեմ»։ Խորհուրդ կը տայինք տէր-հօրը մի բան ուղարկել Մամբրէին, միթէ նա մինչև այժմ չը գիտէ, որ Թեմիս կառավարութիւնը, ինչպէս արդէն ասացինք, դարձել է Թիւրքաց մի փաշայութիւն։

—

Լսում ենք որ Թիֆլիսի հայոց եկեղեցիներում ընտրված 60 պատգամաւորները, որոնք պէտք է ընտրեն Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներին, վճռել են դիմել Վեհափառ Կաթողիկոսին, խնդրելով նրան, որ վերջապէս նշանակի մի թեմական առաջնորդ Վրաստանի և Իմէրէթի հայոց թեմի համար, որ Այվազովսկի արքեպիսկոպոսի մահից յետոյ մնում է մինչև այժմ առանց առաջնորդի։

—